ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

Երևան, 0010, Վ. Սարգսյան փ. 5

N _____

«23» 01 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Սիմոնյան

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով բուժվող հիվանդի մահ առաջացնելու դեպքի առթիվ 2017թ. մարտի 17-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով (2003թ. ապրիլի 18-ին ընդունված) հարուցվել է թիվ 69100817 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել փորձագետների կողմից ծանր և առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ քրեական գործով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու վերաբերյալ: Նշված դեպքով 2019թ. հունվարի 21-ին ՀՀ գլխավոր դատախազության ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության վարչության պետի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (2003թ. ապրիլի 18-ին ընդունված) հարուցվել է թիվ 61200319 քրեական գործը:

Քրեական գործերի փաստական հանգամանքներով պայմանավորված՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու հիմքով 2019թ. հունվարի 23-ին կայացված որոշմամբ 61200319 քրեական գործը միացվել է թիվ 69100817 քրեական գործին:

2022թ. նոյեմբերի 10-ին որոշումներ են կայացվել առերևույթ ակնհայտ կեղծ եզրակացություն տված փորձագետներ Հայկազն Չախոյանի, Կարեն Մխիթարյանի, Արտուր Ղամբարյանի և Արմինե Հարոյանի նկատմամբ քրեական հետապնդում

հարուցել վերջիններիս կողմից ենթադրյալ հանցանքը կատարելու պահին գործող ՀՀ քրեական օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.08.2003թ., ուժը կորցրել է 01.07.2022թ.) 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (գործող ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ):

Առերևույթ ակնհայտ կեղծ եզրակացություն տված փորձագետ Արմեն Գերասիմի Չարչյանն առարկել է վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու դեմ այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

ՀՀ **Սահմանադրության** 96-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

2022թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝

(...)

14. իրավասու վերադաս դատախազին առաջարկում է դիմել իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

Նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝

(...)

9) հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

2023թ. հունվարի 20-ին թիվ 69100817 քրեական վարույթով հսկող դատախազը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ

հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, առաջարկել է ՀՀ գլխավոր դատախազին՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող՝ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու միջնորդությամբ դիմել ՀՀ Ազգային ժողով:

Վերոնշյալ առաջարկության ներկայացման համար հիմք է հանդիսացել ՀՀ գլխավոր դատախազությունում թիվ 69100817 քրեական վարույթի ուսումնասիրությունը, որի արդյունքում պարզվել է, որ կատարված քննությամբ ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ, որոնք հիմք են տալիս ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արմեն Չարչյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցել 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, (գործող ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ), այն է՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքների առնչությամբ քրեական գործով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար:

2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի համաձայն՝

« 1. (...) քրեական (...) գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալը, (...) '

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը՝

1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրանքի առնչությամբ,

2) զուգորդվել է այլ արհեստական ապացույցներ ստեղծելով,

3) կատարվել է շահադիտական դրդումներով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2022թ. հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածի համաձայն՝

«1. (...) քրեական (...) վարույթով (...) փորձագետի կողմից կեղծ եզրակացություն կամ կարծիք տալը կամ թարգմանի կողմից սխալ թարգմանություն կատարելը կամ նոտարի կողմից իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հաստատելու գործով վկայի կողմից սուտ ցուցմունք տալը, եթե դա էական նշանակություն է ունեցել գործի լուծման համար կամ խաթարել է գործի կամ վարույթի ընթացքը՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) շահադիտական դրդումներով կամ

2) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության առնչությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով»:

Թիվ 69100817 քրեական վարույթի նախաքննության արդյունքում ձեռք է բերվել փոխկապակցված, վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջություն առ այն, որ Արմեն Գերասիմի Չարչյանը (ծնված՝ 28.01.1960թ., հաշվառված է ք.Երևան,

Աղայան փողոցի թիվ 19 շենքի 13 բնակարանում, փաստացի բնակվում է Երևան քաղաքի Բագրևանդ թաղամասի 18-րդ տանը), հանդիսանալով «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում որպես գործադիր տնօրեն, ԵՊԲՀ-ի վնասվածքաբանության և օրթոպեդիայի ամբիոնի վարիչ և ընդգրկված լինելով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212116 քրեական գործով Արթուր Ռոբերտի Սարգսյանին ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար առաջադրված մեղադրանքների առնչությամբ նշանակված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ կազմում որպես փորձագետ, 2017թ. փետրվարի 8-ին տվել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 17-0202 ակնհայտ կեղծ եզրակացությունը:

Արմեն Գերասիմի Չարչյանին ենթակա է մեղսագրման 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցավոր արարքի կատարում:

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արմեն Չարչյանի կողմից վերոնշյալ հանցավոր արարքի կատարումը հաստատվել է քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված մի շարք փաստական տվյալներով, ինչպես նաև իրավական հիմնավորումներով:

Մասնավորապես.

- Հանձնաժողովային փորձաքննության կատարման պահին գործող՝ ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածի 37-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների (ներկայիս կարգավորման համաձայն՝ *որպես խափանման միջոց ընտրված կալանքը կամ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների (խանգարումներ, վիճակներ)*) ցանկում ընդգրկված են.

«*Ոսկրամկանային համակարգի հիվանդություններ՝ ծանր պրոգրեսիվ ընթացքով, օրգանների և համակարգերի ֆունկցիայի արտահայտված և կայուն խանգարումներով, հետևյալ հիվանդությունների դեպքում՝*

(...)

2) անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ (Բեխտերևի հիվանդություն):

ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212116 քրեական գործով Արթուր Ռոբերտի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (*կազմակերպված խմբի կողմից պատանդ վերցնելուն օժանդակելը*) և 38-235-րդ հոդվածի 3-րդ մասով (*կազմակերպված խմբի կողմից ապօրինի կերպով հրազեն և ռազմամթերք ձեռք բերելուն ու պահելուն օժանդակելը*), 2016թ. օգոստոսի 3-ին Արթուր Սարգսյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը և վերջինս նույն օրը տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Արթուր Սարգսյանի անվամբ լրացված բժշկական քարտի տվյալների համաձայն՝ հիշյալ քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի պետ Գևորգ Հարությունյանի կողմից 2016թ. օգոստոսի 5-ին Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշվել է՝ «Ողնաշարի պարանոցային հատվածի տրավմա: Վիճակ վիրահատությունից հետո, ցավային արմատիկային համախտանիշ: Որովայնի սպիտակ գծի ճողվածք», որի համար նշանակվել է սիմպտոմատիկ բուժում: 2016թ. դեկտեմբերի 21-ին Արթուր Սարգսյանը «Բեխտերևի հիվանդություն, արմատիկային ցավային համախտանիշով, շարժողական ֆունկցիայի խանգարում, էրոզիվ էզոֆագիտ, մակերեսային գաստրիտ, որովայնի սպիտակ գծի ճողվածք» ախտորոշմամբ ընդունվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-

ի թերապևտիկ բաժանմունք, որտեղ դրվել է նախնական ախտորոշում՝ «Բեխտերևի հիվանդություն, արմատիկային ցավային համախտանիշով և շարժողական ֆունկցիայի խանգարումով: Խրոնիկ հեպատիտ (ճարպային դիստրոֆիա): Էրոզիվ գաստրիտ, բուլբիտ: Որովայնի սպիտակ գծի ճողվածք, C_1 և C_2 ողերի պրոթեզավորում»:

• ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212116 քրեական գործով 2016թ. դեկտեմբերի 23-ին ստացվել է «Ազատություն և Հայրենիք» բարեգործական հիմնադրամի կողմից ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հասցեագրված հրատապ իրազեկումն այն մասին, որ 2016թ. հուլիսի 31-ից կալանավայրում գտնվող Արթուր Սարգսյանը տառապում է «Բեխտերևի» հիվանդությամբ, որի առկայությունը, ըստ ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման՝ խոչընդոտում է պատիժը կալանավայրում կրելուն:

• Թիվ 58212116 քրեական գործով 2016թ. դեկտեմբերի 26-ին նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «ՀՀ ԱՆ դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

• 2016թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունից ստացվել է բժշկական կոնսիլիումի եզրակացությունը, համաձայն որի՝ Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշվել է «Անկիլացնող սպոնդիլոարթրիտ «Բեխտերևի» հիվանդություն, խրոնիկ պրոգրեսիվ ընթացքով, հենաշարժական համակարգի ֆունկցիայի զգալի խանգարումով»: Հաշվի առնելով, որ կոնսիլիումի եզրակացությամբ Արթուր Սարգսյանի մոտ հայտնաբերվել է այնպիսի հիվանդություն, որը նվազեցնում է վերջինիս կողմից քննությունից խուսափելու, նոր հանցանք կատարելու հավանականությունը, նույն օրը որոշում է կայացվել նրա նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը չեղեռանալու մասին ստորագրությամբ փոփոխելու վերաբերյալ:

• 2017թ. հունվարի 23-ին ստացվել է թիվ 273/հձ եզրակացությունը, որի համաձայն՝

«(...) Ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի և սույն փորձաքննության ընթացքում կատարված հետազոտության արդյունքների՝ Արթուր Սարգսյանը տառապում է հետևյալ հիվանդություններով՝ «Անկիլացնող սպոնդիլոարթրիտ (Բեխտերևի հիվանդություն), խրոնիկ պրոգրեսիվող ընթացքով հենաշարժական ֆունկցիայի զգալի խանգարումով: Էրոզիվային գաստրիտ, բուլբիտ: Մելորի-Վեյսի սինդրոմ: Խրոնիկ հեպատոխոլեցիստիս, խրոնիկ բրոնխիտ»: Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված «Անկիլացնող սպոնդիլոարթրիտ («Բեխտերևի» հիվանդություն), խրոնիկ պրոգրեսիվող ընթացքով հենաշարժական ֆունկցիայի զգալի խանգարումով» հիվանդությունը ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման, պատիժը կրելուն խոչընդոտ հանդիսացող ծանր հիվանդությունների ցանկի 37-րդ կետի 2-րդ ենթակետին համապատասխանող հիվանդություն է:

Արթուր Սարգսյանը վերը նշված «Բեխտերևի» հիվանդության առկայության պայմաններում չի կարող պատիժը կրել քրեակատարողական հիմնարկներում և կարիք ունի բուժման՝ նեղ մասնագիտական բաժանմունքում»:

• Նկատի ունենալով, որ Արթուր Սարգսյանի վերաբերյալ հիշյալ եզրակացությունը կասկած է հարուցում, մի շարք հարցեր պարզաբանելու նպատակով նշանակվել է կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

Փորձաքննության ընթացքում՝ 2017թ. փետրվարի 3-ին, Հանձնաժողովը ՀՀ հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնեական

հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Էդ. Հակոբյանին միջնորդել է տրամադրել Արթուր Սարգսյանին ձերբակալելու ժամկետին նախորդող ժամանակահատվածում բժշկական հաշվառման և հսկողության վերաբերյալ բժշկական փաստաթղթեր, միաժամանակ Հանձնաժողովի կազմում ներգրավել բժշկագիտության բնագավառի տարբեր ոլորտների առաջատար նեղ մասնագետների, ինչպես նաև փորձաքննության իրականացման համար ապահովել Արթուր Սարգսյանի ներկայությունը փորձաքննությանը՝ նրան համապատասխան նեղ-մասնագիտական կլինիկալաբորատոր և գործիքային անհրաժեշտ հետազոտությունների ենթարկելու նպատակով, որը նախատեսվում է իրականացնել «Իզմիրլյան» ԲԿ-ում, 2017թ. փետրվարի 6-ին:

Փորձաքննության կատարման համար որպես նեղ մասնագետներ ներգրավվել են «Երևանի Մխիթար Հերացու անվան» պետական բժշկական համալսարանի վնասվածքաբանության և օրթոպեդիայի ամբիոնի վարիչ, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն Արմեն Չարչյանը, նույն բժշկական կենտրոնի նյարդաբանական ծառայության ղեկավար Վարդան Խաչիյանը, «Էրեբունի» բժշկական կենտրոնի ռևմատոլոգիայի բաժանմունքի վարիչ, Երևան քաղաքի գլխավոր ռևմատոլոգ Արմինե Հարոյանը:

Վարույթն իրականացնող մարմինը 2017թ. փետրվարի 4-ին ծանուցագիր է ուղարկել Արթուր Սարգսյանին՝ հարցաքննության ներկայանալու, ինչպես նաև փորձաքննությանը մասնակցելու վերաբերյալ:

2017թ. փետրվարի 6-ին Արթուր Սարգսյանը հարցաքննվել է և հայտնել, որ չի ցանկանում ներկայանալ փորձաքննությանը:

2017թ. փետրվարի 7-ին վարույթն իրականացնող մարմնի կողմից կազմվել է տեղեկանք, համաձայն որի՝ հեռախոսազանգի միջոցով Արթուր Սարգսյանը տեղեկացվել է փորձաքննության ներկայանալու անհրաժեշտության մասին, սակայն վերջինս հայտնել է, որ դեռևս այդ հարցով չի խորհրդակցել իր պաշտպանների հետ, հետևաբար հրաժարվում է ներկայանալ:

1998թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«*Փորձագետը պարտավոր է՝*

(...)

3) հրաժարվել փորձաքննություն կատարելուց, եթե առաջադրված հարցերը դուրս են գալիս իր հատուկ գիտելիքների շրջանակներից, կամ ներկայացված նյութերը բավարար չեն այդ հարցերին պատասխանելու համար՝ այդ մասին կազմելով եզրակացություն.»

Նույն օրենսգրքի 250-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«*Եթե ներկայացված նյութերն անբավարար են կամ հարցի լուծումը դուրս է փորձագետի հատուկ գիտելիքների սահմաններից, փորձագետի եզրակացությունը պետք է բովանդակի առաջադրված բոլոր կամ որոշ հարցերին պատասխանելու անհնարինության մասին հիմնավորում:»*:

- 2017թ. փետրվարի 7-ին և 8-ին Արթուր Սարգսյանը չի ներկայացել փորձաքննության, իսկ փորձաքննությունն իրականացվել և ավարտվել է առանց վերջինիս առողջական վիճակի հետազոտման՝ ներկայացված բժշկական տվյալների հիման վրա, վերը նշված իրավանորմերի պահանջների անտեսմամբ. հարցերին պատասխանելու համար ներկայացված նյութերը բավարար չլինելու վերաբերյալ եզրակացություն չի կազմվել, Հանձնաժողովի եզրակացությունը որոշ հարցերին պատասխանելու անհնարինության մասին հիմնավորում չի պարունակում:

• 2017թ. փետրվարի 8-ին տրված՝ փորձագետի թիվ 17-0202 եզրակացության համաձայն.

«(...) Ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների, կատարված ռենտգեն, ողնաշարի մագնիսառեզոնանսային և պարանոցի, կրծքավանդակի, որովայնի և կոնքի համակարգչային շերտագրություն հետազոտությունների արդյունքների՝ ներկայումս Արթուր Սարգսյանի մոտ առկա է՝ անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ («Բեխտերևի» հիվանդություն) պրոգրեսիվ ընթացքով, երկկողմանի սակրոիլեիտով 4-րդ աստիճանի, սինդեզմոֆիտոզով, կոնք-ազդրային հոդերի երկկողմանի երկրորդային դեֆորմացնող օստեոարթրոզով 3-րդ աստիճանի, առանց ներքին օրգանների ախտահարման, որոնք ունեն զարգացման տարիների վաղեմություն: Ըստ ներկայացված բժշկական փաստաթղթերի տվյալների՝ Արթուր Սարգսյանի մոտ առկա է նաև վիճակ ողնաշարի պարանոցային առաջին և երկրորդ ողերի վիրահատական միջամտությունից հետո (ըստ ներկայացված թիվ 3909 պատմագրի քաղվածքի, կատարված 01.07.1997թ.), որովայնի սպիտակ գծի ճողվածք, էրոզիվ գաստրիտ, բուլբիտ, որոնց առաջացման վաղեմության վերաբերյալ ստույգ եզրահանգումներ կատարել հնարավոր չէ: Առանց սույն փորձաքննության իրականացման շրջանակներում Արթուր Սարգսյանի մոտ օբյեկտիվ զննության իրականացման պարզել անկիլոզացնող սպոնդիլոարթրիտի հետևանքով ներկայումս նրա մոտ հենաշարժական համակարգի ֆունկցիայի խանգարման աստիճանը հնարավոր չէ, առավել ևս այն դեպքում, երբ ներկայացված բժշկական փաստաթղթերի, նաև նախորդ փորձաքննության թիվ 273/հձ եզրակացության տվյալներում առկա չեն համապատասխան ֆունկցիոնալ փորձերի՝ չափումների արդյունքները:

Արթուր Սարգսյանի մոտ առկա՝ վերը նշված հիվանդությունները, նաև անկիլոզացնող սպոնդիլոարթրիտը («Բեխտերևի» հիվանդությունը) ներկայիս դրսևորումներով՝ ***առանց ներքին օրգանների ախտահարումների (ֆունկցիաների խանգարումների) չեն դասվում*** *ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածով, նաև 37-րդ կետով սահմանված պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին»:*

• Մեղադրյալ Արթուր Սարգսյանն իր նկատմամբ կիրառված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի պայմանները խախտելու հիմքով, 2017թ. փետրվարի 9-ին ձերբակալվել է, նույն օրը նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը և տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ:

• 2017թ. փետրվարի 10-ին Արթուր Սարգսյանը դիմում է հասցեագրել ՀՀ ԱՆ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի պետին՝ հայտնելով, որ հայտարարում է հացադուլ:

• 2017թ. մարտի 6-ին Արթուր Սարգսյանի նկատմամբ կիրառված խափանման միջոց կալանավորումը փոփոխվել է անձնական երաշխավորությամբ:

• 2017թ. մարտի 6-ին Արթուր Սարգսյանն ազատ է արձակվել և տեղափոխվել «Արմենիա» ՀԲԿ, որտեղ ստացիոնար բուժում է ստացել մինչև 2017թ. մարտի 10-ը ներառյալ:

• «Արմենիա» ՀԲԿ-ի թիվ 1080/198 հիվանդության պատմագրի համաձայն՝ 2017թ. մարտի 11-ին՝ ժամը 9^{00}-ից, Արթուր Սարգսյանը բացակայել է հիվանդասենյակից:

• Դրանից հետո՝ 2017թ. մարտի 15-ին, Արթուր Սարգսյանը կրկին տեղափոխվել է «Արմենիա» ՀԲԿ: Հիշյալ բժշկական կենտրոնի բժիշկների կազմած մահվան էպիկրիզի համաձայն՝ 1968թ. ծնված Արթուր Սարգսյանը շտապ բժշկական օգնության բրիգադի կողմից 2017թ. մարտի 15-ին տեղափոխվել է «Արմենիա» ՀԲԿ: Արթուր Սարգսյանի

առաջնային դիտումից հետո ախտորոշվել է օղակված պորտային ճողվածք և վերջինս հոսպիտալացվել է 1-ին վիրաբուժական բաժանմունքում: Արթուր Սարգսյանին ցուցվել է շտապ կյանքի ցուցումներով վիրահատական բուժում: Կատարված նախավիրահատական հետազոտություններից և նշանակումներից հետո, 15.03.2017թ.՝ ժամը 20^{15}-ին, Արթուր Սարգսյանը տեղափոխվել է վիրահատարան: Ժամը 22^{05}–ին ընդհանուր անզգայացման պայմաններում կատարվել է վիրահատություն: Արթուր Սարգսյանը հետնարկոտիկ քնի վիճակում արհեստական շնչառությամբ տեղափոխվել է վերակենդանացման բաժանմունք՝ հետագա բուժումը շարունակելու նպատակով: 16.03.2017թ.՝ ժամը 15^{40}-ին գրանցվել է Արթուր Սարգսյանի կենսաբանական մահը:

- 2003թ. ապրիլի 18-ին ընդունված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, այն է՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով բուժվող հիվանդի մահ պատճառելու դեպքի առթիվ հարուցված թիվ 6900817 քրեական գործով 2017թ. մարտի 17-ին նշանակվել է հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ «Դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

Դիակի դատաբժշկական փորձաքննության թիվ 0408 եզրակացության համաձայն. «Արթուր Սարգսյանի մահը վրա է հասել բազմօրգանային անբավարարությունից, որը պայմանավորված է երկկողմանի թարախա-ֆիբրինային միաձույլ թոքաբորբով, օջախային շճային միոկարդիտով, սրտամկանի ծանր դիստրոֆիայով, օղակված պորտային ճողվածքի և սուր բարակաղիքային օբտուրացիոն անանցանելիության կապակցությամբ կատարված վիրահատությամբ՝ որովայնահատմամբ, տարածուն շճային պերիտոնիտով, վիրուսային հեպատիտ «C»-ով, քրոնիկ հեպատիտի ֆոնի վրա լյարդի ոչ լրիվ սեպտալ ցիռոզով, ներքին օրգանների ծանր միկրոցիրկուլյատոր խանգարումներով, դիստրոֆիկ-նեկրոտիկ փոփոխություններով, որոնք առկա են եղել Ա.Սարգսյանի մոտ կենդանության օրոք և մահվան անմիջական պատճառի հետ գտնվել են ուղղակի պատճառական կապի մեջ»:

Նույն եզրակացության համաձայն՝ Արթուր Սարգսյանը կենդանության օրոք տառապել է նաև անկիլոզացնող սպոնդիլոարթրիտով («Բեխտերևի» հիվանդություն) խրոնիկ պրոգրեսիվող ընթացքով հենաշարժական ֆունկցիայի զգալի խանգարումով: Ըստ առկա բժշկական փաստաթղթերի տվյալների՝ Արթուր Սարգսյանի մոտ «Բեխտերևի» հիվանդությունը ախտորոշվել է 1988թ.-ին:

- Թիվ 69000817 քրեական վարույթով 2018թ. հունիսի 27-ին նշանակվել է դատաբժշկական հանձնաժողովային կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ «Դատաբժշկական փորձաքննությունների գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին: 2018թ. նոյեմբերի 1-ին ստացված փորձագետի թիվ 9/կ եզրակացության համաձայն.

«Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված հիվանդություններից «Բեխտերևի» հիվանդությունն իր պրոգրեսիվ ընթացքով, հենաշարժական համակարգի ֆունկցիայի զգալի և կայուն խանգարումով, շարակցական հյուսվածքի համակարգային ախտահարման հետևանքով այլ օրգան համակարգերի հիվանդությունների առաջացման բարձր հավանականությամբ դասվում է ծանր հիվանդությունների շարքին:

Արթուր Սարգսյանի մոտ առկա է եղել ոսկրամկանային համակարգը կազմող ողերի, միջողային աճառների, ողնաշարի հետ աճառային միացում ունեցող հոդերի և կոնքազդրային հոդերի ծանր պրոգրեսիվ ընթացք ունեցող ախտահարում՝ հենաշարժական ապարատի ֆունկցիայի արտահայտված և կայուն խանգարումով: Սույն

հետևությունը հաստատվում է Արթուր Սարգսյանի հիվանդության կլինիկական արտահայտությամբ, համակարգչային շերտագրության և մագնիսառեզոնանսային հետազոտության պատկերների նկարագրությամբ, նրա դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում ողնաշարի պարանոցային, կրծքային, գոտկային ողերի, միջողային կապանների միաձուլված, անշարժ «բամբուկի ձողի» պատկերի նկարագրությամբ:

Հետևաբար, Արթուր Սարգսյանի կենդանության օրոք առկա «Բեխտերևի» հիվանդությունը՝ ոսկրամկանային համակարգի ախտահարման ծանր պրոգրեսիվ ընթացքով, հենաշարժական ապարատի և նրա կազմի մեջ մտնող օրգանների ֆունկցիայի արտահայտված և կայուն խանգարումով, պրոգրեսիվ ընթացքին բնորոշ շարակցական հյուսվածքի համակարգային աուտոիմուն ախտահարումներով համապատասխանել է ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 26-ի 825-Ն որոշման՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 2-րդ հավելվածի 37-րդ կետին:

Հանձնաժողովը գիտականորեն հիմնավորված և հավաստի է համարում միայն դատաբժշկական փորձաքննության թիվ 273/հձ եզրակացությունը: Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված «Բեխտերևի» հիվանդությունը համապատասխանել է ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածի 37-րդ կետի 2-րդ ենթակետում սահմանված հիվանդությանը:

Քննիչի որոշմամբ նշանակված է եղել Արթուր Սարգսյանի առողջական վիճակի վերաբերյալ դատաբժշկական փորձաքննություն, ինչը դատական բժշկության մեջ համարվում է կենդանի անձի փորձաքննություն: Արթուր Սարգսյանը փորձաքննության չի ներկայացել, փորձաքննությունն իրականացվել և ավարտվել է քննչական նյութերի հիման վրա: Վարույթն իրականացնող մարմնի հանձնարարականը կամ համաձայնությունը փորձաքննության ընթացքի փոփոխության մասին թիվ 17-0202 եզրակացության փաստաթղթերում առկա չէ: Տվյալ իրավիճակում , եթե Հանձնաժողովը եզրակացություն տալու համար ֆունկցիոնալ փորձերի իրականացումն անհրաժեշտ է համարել, ապա Արթուր Սարգսյանի փորձաքննության չներկայանալու պարագայում, առավել ճիշտ կլիներ վարույթն իրականացնող մարմնին տեղեկացնել եզրակացություն տալու անհնարինության մասին»:

- Թիվ 17-0202 եզրակացությունը տված Հանձնաժողովի անդամ վկա **Արտուր Ղամբարյանը ցուցմունք է տվել այն մասին, որ** Արթուր Սարգսյանի նկատմամբ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում նշանակված դատաբժշկական կրկնակի հանձնաժողովային փորձաքննության ընթացքում իրեն չի տրամադրվել ոչ մի բժշկական փաստաթուղթ: Արթուր Սարգսյանն ունեցել է «Բեխտերևի» հիվանդություն և ուղեկցող հիվանդություններ: Եզրակացությունը տալու ժամանակ համաձայն չի եղել ու ներկայումս համաձայն չէ, որ Արթուր Սարգսյանը կարող էր գտնվել կալանավայրում, սակայն եզրակացությունը ստորագրել է, քանի որ բոլորը ստորագրել են, չէր կարող չստորագրել: Այդ նույն ժամանակ եղել է մեկ այլ գործով հանձնաժողովի կազմում ու պնդել է, որ պետք է եզրակացությունն ավարտվի միայն փորձաքննվողի ներկայանալուց, հետազոտվելուց հետո, սակայն փորձաքննվողը չի ներկայացել, ուստի գրել է հատուկ կարծիք: Չէր կարող Արթուր Սարգսյանի գործով ևս նույն բանն անել, քանի որ հասկացել է, որ եթե Արթուր Սարգսյանի վերաբերյալ կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննությունն այդ արագությամբ է կատարվում, ուրեմն անհրաժեշտ է: Իրեն ոչ ոք չի ասել, որ եզրակացությունը պետք է նման բովանդակությամբ կազմվի և ստորագրվի, սակայն Հանձնաժողովի նիստի ընթացքից այդպես է հասկացել: Նույնիսկ չի իմացել, թե Արթուր Սարգսյանը որտեղ պետք է ազատազրկվեր և ինչ պայմաններում, ուստի այդ

հիվանդությունների առկայության պայմաններում նա չէր կարող գտնվել բանտում, որի պայմաններին ծանոթ չի եղել Հանձնաժողովը: 2017թ. փետրվարի 8-ին «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում կայացած Հանձնաժողովի նիստին, բացի Հանձնաժողովի անդամներից, ներկա է գտնվել նաև ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի նախկին ղեկավար, ներկայումս նշված հիմնարկի տնօրեն Արգամ Հովսեփյանը, սակայն իրեն անհասկանալի կարգավիճակում: Վերջինս կարծիք է արտահայտել, որ Հանձնաժողովի անդամները սահմանափակվեն, փորձաքննությունն ավարտեն առանց փորձաքննվող Արթուր Սարգսյանի ներկայության, քանի որ նա հրաժարվել է ներկայանալ փորձաքննությանը: Իր ցուցմունքում վկա Ա.Ղամբարյանը համաձայնություն է հայտնել այն մասին, որ փորձաքննության ժամանակ Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված «Բեխտերևի» հիվանդությունն ունեցել է ծանր պրոգրեսիվ ընթացք՝ միաժամանակ օրգանների և համակարգերի ֆունկցիայի արտահայտված ու կայուն խանգարումներով: Ա.Ղամբարյանը հայտնել է նաև, որ Արթուր Սարգսյանի վերաբերյալ կատարված փորձաքննության ընթացքում **զեկուցող չի հանդիսացել**, նման տեղեկություն անգամ չի ունեցել և դրա մասին իմացել է միայն ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարցաքննվելիս, երբ տեսել է թիվ 17-0202 եզրակացությունը, բայց քննիչին չի ցանկացել հայտնել այդ մասին: Փորձաքննության ժամանակ գրագրությունները կատարելը դրված է եղել Հայկազն Զախոյանի վրա, և նա է դրանք կատարել: Գրագրությունները կատարվել են տպագիր, որևէ սղագրություն չի կատարվել իր ներկայությամբ, վերջին օրը՝ 2017 թվականի փետրվարի 8-ին, Հայկազն Զախոյանը միանգամից գրված բերել է եզրակացության արձանագրությունը, որը ներկայացրել է: Ինքը ձեռքի տակ չի ունեցել որևէ փաստաթուղթ, միայն լսել է նրա ներկայացմամբ: 2017թ. փետրվարի 8-ին «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում հավաքվել են Հանձնաժողովի բոլոր անդամներով: Չգիտի, թե ով, երբ և որտեղ է տպել թիվ 17-0202 եզրակացությունը: Այդ պարտականությունը դրված է եղել Հայկազն Զախոյանի վրա, սակայն նա է տպել, թե ուրիշ մեկը, չգիտի: Հանձնաժողովի կողմից կայացվել է մեկ նիստ՝ 2017թ. փետրվարի 8-ին, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում: Հստակ չի հիշում, թե կոնկրետ որտեղ է ստորագրել եզրակացությունը՝ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում, թե ՊՈԱԿ-ում:

- Փորձագետ Արտուր Ղամբարյանն առերեսվել է փորձագետներ Հայկազն Զախոյանի և Կարեն Մխիթարյանի հետ, որի ընթացքում պնդել է նախաքննության ընթացքում իր տված ցուցմունքները, մասնավորապես այն, որ տեղյակ չի եղել իրեն որպես զեկուցող նշանակելու և այդ մասին ակտում նշելու մասին:
- Նախաքննության ընթացքում ձեռք են բերվել թիվ 17-0202 եզրակացությունը տված Հանձնաժողովի անդամների կողմից օգտագործված բջջային հեռախոսահամարների վերծանումները: Վերծանումների տվյալների զննությամբ և փորձագետների հարցաքննությունների արդյունքների համադրմամբ պարզվել է, որ Հանձնաժողովի անդամները միայն մեկ անգամ՝ 2017թ. փետրվարի 8-ին են լիակազմ նիստի մասնակցել, այն էլ՝ 12^{17}-ից 14^{00}-ն ընկած ժամանակահատվածում: Այդ հանգամանքն իրենց ցուցմունքներով հաստատել են նաև թիվ 17-0202 եզրակացությունը տված Հանձնաժողովի բոլոր անդամները:
- Նախաքննության ընթացքում ձեռք են բերվել պատգամավոր Ա.Զարչյանի կողմից օգտագործված բջջային հեռախոսահամարի հեռախոսազանգերի վերծանումները և դրանք սպասարկած ալեհավաք կայանների տեղակայումների վերաբերյալ տվյալները, որոնց ուսումնասիրությամբ հիմնավորվել է Արմեն Զարչյանի՝ 2017թ. փետրվարի 8-ին՝

ժամը 12^{17}-ից 14^{00}-ն ընկած ժամանակահատվածում, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում գտնվելու հանգամանքը:

• 2019թ. հուլիսի 24-ին որոշում է կայացվել նշանակել կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ առողջապահության նախարարի կողմից ներկայացված մասնագետներից ձևավորված հանձնաժողովի փորձագետներին:

• 2019թ. դեկտեմբերի 4-ին ստացված եզրակացության համաձայն՝ «Երբ փորձաքննվողը չի ներկայանում փորձաքննության և առաջադրված հարցերի ամբողջական պատասխան հնարավոր չի լինում տրամադրել, փորձաքննական եզրակացությունը չի լինում ավարտուն, որում նշվում է եզրակացության տրամադրման անհնարինության մասին:

«Առողջությանը պատճառված վնասի ծանրությունը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության իրականացման կարգը և տարբեր վնասվածքների հետևանքով առաջացած ընդհանուր աշխատունակության կայուն կորստի տոկոսները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014թ. օգոստոսի 14-ի թիվ 860-Ն որոշման 33-րդ կետի համաձայն՝ առողջությանը պատճառված վնասի ծանրությունը չի որոշվում, երբ անձը չի ներկայանում փորձաքննության, և առկա բժշկական փաստաթղթերի տվյալները բավարար չեն առողջությանը պատճառված վնասի աստիճանը որոշելու համար (փորձաքննության ենթարկվող անձի վնասվածքի կամ հիվանդության՝ ախտաբանական վիճակի ախտորոշումը հաստատված չէ, կլինիկական պատկերը պարզ չէ, կլինիկական և լաբորատոր հետազոտությունները կատարված են ոչ բավարար»:

Արթուր Սարգսյանի մոտ տարիների ընթացքում մի քանի անգամ տարբեր բուժհաստատություններում ախտորոշված հիվանդություններից «Բեխտերև» հիվանդությունն իր ծանր պրոգրեսիվ ընթացքով համապատասխանում է ՀՀ Կառավարության 2006թ. թիվ 825-Ն որոշման՝ պատիժը կրելուն, խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում կրկնակի հանձնաժողովային փորձաքննության ընթացքում ներկայացված փաստաթղթերի և մյուս նյութերի տվյալներով հնարավոր էր որոշել Արթուր Սարգսյանի մոտ եղած «Բեխտերև» հիվանդության պրոգրեսիվող և ծանր ընթացքը»:

• Նախաքննության ընթացքում Արմեն Չարչյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Արմեն Սարգսյանի վերաբերյալ ներկայացված բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունից հնարավոր է եղել գալ եզրահանգման, որ վերջինիս մոտ առկա «Բեխտերևի» հիվանդությունը չի ունեցել ծանր պրոգրեսիվ ընթացք և չի դասվել ՀՀ Կառավարության 2006թ. թիվ 825-Ն որոշման՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին: <u>Նշել է, որ Հանձնաժողովի եզրակացությունը չէր կարող լինել վերջնական և լիարժեք, քանի որ փորձաքննվողը հրաժարվել է ներկայանալ փորձաքննության, որի պայմաններում կենթարկվեր կլինիկական զննման լաբորատոր գործիքային հետազոտությունների:</u>

• Նախաքննության ընթացքում 2018թ. հոկտեմբերի 30-ի թիվ 9Կ եզրակացությունը տված Հանձնաժողովի նախագահ Երվանդ Սահակյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Արթուր Սարգսյանի մոտ եղած «Բեխտերևի» հիվանդության ախտորոշումը՝ երկկողմանի սակրոիլեիտ 4-րդ աստիճանի, սինդեզմոֆիտոզ երկկողմանի կոքսարթրոզ 4-րդ աստիճանի, ինքնին հանդիսանում է հենաշարժական ապարատի արտահայտված և կայուն խանգարումներ: Մեջբերված գիտական գրականության մեջ առկա են նաև

մեթոդիկաները, որոնք հիմք են տալիս ճառագայթային և ՄՌՏ հետազոտություններով հստակ որոշելու «Բեխտերևի» հիվանդության հետ կապված ախտահարման աստիճանները: Ավելին՝ Արթուր Սարգսյանի դիակի դատաբժշկական փորձաքննության ընթացքում նկարագրված է ողնաշարի ախտահարումը «Բամբուկի ձողի տեսքով» և եղել է բացարձակ անշարժ վիճակում, նույնիսկ ուժի գործադրման դեպքում: Նշել է, որ Արթուր Սարգսյանի ողնաշարի նման վիճակը չէր կարող զարգանալ կատարված ճառագայթային և ՄՌՏ հետազոտություններին հաջորդող կարճ ժամանակահատվածում՝ մինչև մահվանից հետո՝ դիակի դատաբժշկական փորձաքննությունը: Արթուր Սարգսյանի ողնաշարի և կոնքոսկրերի միացումների խանգարումների իրական պատկերն արտացոլվել է դիակի դատաբժշկական փորձաքննությամբ, որն առկա է թիվ 9/կ եզրակացության մեջ: Նման պայմաններում Արթուր Սարգսյանի մոտ ախտորոշված «Բեխտերևի» հիվանդությունն իր դրսևորումներով առկա վիճակով համապատասխանել է ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման նախկին խմբագրությամբ 2-րդ հավելվածի 37-րդ կետին: Իրենց հանձնաժողովի կողմից վերը նշված հարցերի կապակցությամբ տրվել է ճիշտ ու հիմնավորված եզրակացություն: Այս հարցերի առնչությամբ թիվ 17-0202 եզրակացությունը տված փորձագիտական հանձնաժողովը հանգել է ոչ ճիշտ հետևության, որը կատարվել է նրանց կողմից ոչ բավարար հետազոտություններ կատարելու պատճառով, առավել ևս, երբ նրանք այդ բարդ փորձաքննությունը կատարել են հիվանդին չտեսնելու, չհետազոտելու պայմաններում:

- Նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև փորձագետներ Ալլա Սանաղյանը, Աստղիկ Կարապետյանը, Նելլի Խոստիկյանը, Քնարիկ Գինոսյանը:
- 2019թ. դեկտեմբերի 4-ին ստացված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը կազմած փորձագետ, վնասվածքաբան-օրթոպեդ Արարատ Լևոնյանը ցուցմունք է տվել այն մասին, որ փորձագիտական հանձնաժողովներին տրամադրված կլինիկական տվյալներով, ճառագայթային և ՄՌՏ հետազոտությունների արդյունքներով հիմնավորվում է Արթուր Սարգսյանի մոտ առկա «Բեխտերևի» հիվանդության ծանրության աստիճանը, որը դասվում է 2006թ. թիվ 825-Ն որոշման՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին:

Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև փորձագետ, ռևմատոլոգ Տաթևիկ Սահակյանը:

Վերոշարադրյալի հիման վրա գտնում ենք, որ վկայակոչված ապացույցներով հաստատվում է, որ պատգամավոր Արմեն Չարչյանը, ընդգրկված լինելով ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող թիվ 58212116 քրեական գործով Արթուր Ռոբերտի Սարգսյանին ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար առաջադրված մեղադրանքների առնչությամբ նշանակված կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննության հանձնաժողովի կազմում որպես փորձագետ, 2017թ. փետրվարի 8-ին տվել է կրկնակի դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննության թիվ 17-0202 ակնհայտ կեղծ եզրակացությունն այն մասին, որ Արթուր Սարգսյանի մոտ առկա՝ վերը նշված հիվանդությունները, նաև անկիլոզացնող սպոնդիլոարթրիտը («Բեխտերևի» հիվանդությունը) ներկայիս դրսևորումներով՝ **առանց ներքին օրգանների ախտահարումների (ֆունկցիաների խանգարումների), չեն դասվում ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման 2-րդ հավելվածով, նաև 37-րդ կետով սահմանված՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների շարքին:** Մինչդեռ վերը թվարկված ապացույցներով հիմնավորվել է, որ Արթուր Սարգսյանի կենդանության օրոք առկա «Բեխտերևի» հիվանդությունը՝ ոսկրամկանային համակարգի ախտահարման ծանր պրոգրեսիվ ընթացքով, հենաշարժական ապարատի և

նրա կազմի մեջ մտնող օրգանների ֆունկցիայի արտահայտված և կայուն խանգարումով, պրոգրեսիվ ընթացքին բնորոշ շարակցական հյուսվածքի համակարգային աուտոիմուն ախտահարումներով, համապատասխանել է ՀՀ Կառավարության 2006թ. մայիսի 26-ի 825-Ն որոշման՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկի 2-րդ հավելվածի 37-րդ կետին:

Միաժամանակ, անհրաժեշտ եմ համարում նշել, որ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հանգամանքների առկայությունը քրեական հետապնդումը բացառող չէ, եթե անձն առարկում է դրա դեմ այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը:

Սույն դեպքով անցել են պատգամավոր Արմեն Չարչյանին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, սակայն, նկատի ունենալով, որ վերջինս առարկել է իր նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու դեմ, այն հիմքով, որ չի կատարել իրեն մեղսագրվող արարքը, հետևաբար նշված հանգամանքը քրեական հետապնդումը բացառող չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով՝

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ՝

Տալ համաձայնություն ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Արմեն Գերասիմի Չարչյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

Սույն միջնորդագրին կցվում է պատգամավոր Ա.Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Խորին հարգանքով՝

Ա.Վարդապետյան